**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**
**ԼՈՌԻ ԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնք
Գ.Լոռի Բերդ, Աշոտ Երկաթ 7, Հեռ. (0256) 2-14-75, loriberd.lori@mta.gov.am

N 791
*02 դեկտեմբեր 2019թ.*

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ**
**ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ**
**ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Ղուկասյան.

Ձեզ եմ ներկայացնում Լոռի Բերդ համայնքի ղեկավարի 2019թ. թիվ 229-Ա, 230-Ա և 231-Ա որոշումները:

Առդիր՝ էլեկտրոնային նյութեր:

Недействительная подпись

X

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝** **Է. ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ**

*Կատ.՝ Աշխատակազմի քարտուղարի ժ/պ՝ Ա. Մարտիրոսյան*
*Հեռ.՝ (0256)21475*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ, գ. Լոռի Բերդ
հեռ. 0256-2-14-75
էլ. փոստ: loriberd.lori@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

«29» նոյեմբերի 2019թ. № 229-Ա

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԼԵՋԱՆ ԳՅՈՒՂԻ 06-038-0041-0027 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՄԻՆՉԵՎ 15.05.2001Թ. ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ, ՄԻՆՉԵՎ 15.05.2001Թ. ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով Լեջան գյուղի բնակիչներ՝ Ռուբիկ Ռաֆիկի Ղազարյանի և Ռուդիկ Ռաֆիկի Ղազարյանի դիմումները, 04.11.2019թ. թիվ 3550 սեղանամատյանով հաստատված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը, «Գ. Վեքիլյան» ԱՁ-ի կողմից տրված անշարժ գույքի տեղագրական հատակագիծը, ղեկավարելով՝ «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասով, 64-րդ հոդվածի 8-րդ և 16-րդ մասերով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24 կետով, ՀՀ 510-Ն օրենքով, գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին օրենքի 34-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387 որոշմամբ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Վերականգնել ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Լեջան գյուղի 06-038-0041-0027 ծածկագրի տակ գտնվող 0.38048 քմ բնակելի կառուցապատման հողամասի հողահատկացման փաստաթղթերի հիմքերը ՝

ա) ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Լեջան գյուղի 06-038-0041-0027 ծածկագրի տակ գտնվող բնակելի կառուցապատման հողամասի մակերեսը՝ 0.38048 քմ.

բ) հողամասի սահմանները և հատակագիծը համաձայն հավելվածի:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված 0.38048 քմ. մակերեսով բնակելի կառուցապատման հողամասը, որը չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, անհատույց բաժնային սեփականության իրավունքով վերահատկացնել՝ Ռուբիկ Ռաֆիկի Ղազարյանին 1/2 բաժնեմասով և Ռուդիկ Ռաֆիկի Ղազարյանին 1/2 բաժնեմասով , իսկ մինչև 15.05.2001թ. կառուցված բնակելի տների և օժանդակ շինությունների նկատմամբ օրենքի ուժով անհատույց ճանաչել նրանց բաժնային սեփականության իրավունքը, յուրաքանչյուրին 1/2 բաժնեմասով:

3. ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի , Լեջան գյուղի 06-38-0041-0027 ծածկագրի տակ գտնվող 0.38048 քմ. մակերեսով հողամասում, այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող մինչև 15.05.2001թ. կառուցված՝ բնակելի տան, 114.93 քմ մակերեսով կիսանկուղի, 155.08 քմ մակերեսով 1-ին հարկի , 20.83 քմ մակերեսով բաց պատշգամբի նկատմամբ համաձայն հավելվածի ճանաչել Ռուբիկ Ռաֆիկի Ղազարյանի և Ռուդիկ Ռաֆիկի Ղազարյանի ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը՝ յուրաքանչյուրին 1/2 բաժնեմասերով:

4. Հողամասում առկա են ինքնակամ կառուցված շինություններ՝ 23.33 քմ մակերեսով կիսանկուղի մաս, 61.46 քմ մակերեսով բնակելի տան մաս, 11.04 քմ մակերեսով բաց պատշգամբ, 51.59քմ մակերեսով անասնաշենք, 19.07 քմ մակերեսով ծածկարան, 3.34 քմ մակերեսով պարիսպ:

5. Հաստատել 06-038-0041-0027 ծածկագրի տակ գտնվող անշարժ գույքի փոստային հասցեն՝ ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնք գյուղ Լեջան 16 փողոց, թիվ 16 բնակելի տուն:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից: Որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում:

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ Է. ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ

2019թ. նոյեմբերի 29
գ. Լոռի Բերդ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

## ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ, գ. Լոռի Բերդ
հեռ. 0256-2-14-75
էլ. փոստ: loriberd.lori@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

«29» նոյեմբերի 2019թ. № 230-Ա

### ՀՀ ԼՈՌԻ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ «ԼԵՋԱՆ ԳՅՈՒՂԻ 06-038-0040-0007 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ , ՄԻՆՉԵՎ 15.05.2001Թ. ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» 14.11.2019Թ. N 216-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ

Հիմք ընդունելով Լեջան գյուղի բնակիչ Ռուբիկ Ռաֆիկի Ղազարյանի կողմից ներկայացված դիմումը, համայնքապետարանի կողմից տրված քաղվածքը, «Գ. ՎԵՔԻԼՅԱՆ» ԱՁ-ի կողմից կազմված տեղագրական հատակագիծը, ղեկավարվելով՝ «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասով, 64-րդ հոդվածի 8-րդ և 16-րդ մասերով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24 կետով, գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին օրենքի 34-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387 որոշմամբ՝

**Ո Ր Ո Շ Ու Մ ԵՄ**

1. Վերականգնել Լոռի Բերդ համայնքի Լեջան գյուղի 06-038-0040-0007 ծածկագրում գտնվող 0.17771 հա մակերեսով բնակելի կառուցապատման հողամասի հողհատկացման հիմքերը՝
   ա/ Լեջան գյուղի 06-038-0040-0007 ծածկագրի հողամասի մակերեսը 0.17771 հա
   բ/ հողամասի սահմանները և հատակագիծը համաձայն հավելվածի:
2. Սույն որոշման 1-ն կետում նշված 0.17771 հա մակերեսով բնակելի կառուցապատման հողամասը, որը չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, անհատույց համատեղ սեփականության իրավունքով վերահատկացնել Ռուբիկ Ռաֆիկի Ղազարյանին, Ռիմա Աշոտի Ղազարյանին, Հովիկ Ռուբիկի Ղազարյանին, Սյունե Ռուբիկի Ղազարյանին՝ ճանաչել նրանց ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը:
3. ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Լեջան գյուղի 06-038-0040-0007 ծածկագրի տակ գտնվող 0.17771 հա մակերեսով հողամասում, այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների և հարկադիր

սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող մինչև 15.05.2001թ. կառուցված՝ 29.82 մակերեսով թռչնանոցի, 107.71 քմ մակերեսով ծածկարանի, 62.6 քմ և 18.01 քմ մակերեսնեով պարիսպների, նկատմամբ համաձայն հավելվածի ճանաչել Ռուբիկ Ռաֆիկի Ղազարյանին, Ռիմա Աշոտի Ղազարյանին, Հովիկ Ռուբիկի Ղազարյանին, Սյունե Ռուբիկի Ղազարյանին՝ ճանաչել նրանց ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը:

4. Հողամասում առկա է ինքնակամ կառուցված 113.79 քմ մակերեսով անասնաշենք:
5. 06-038-0040-0007 ծածկագրի տակ գտնվող անշարժ գույքին տրամադրել՝ ՀՀ Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք գյուղ Լեջան 15 փողոց, թիվ 6 փոստային հասցեն:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից: Որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ Կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ Է. ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ

Կ.Տ.

2019թ. Նոյեմբերի 29

գ. Լոռի Բերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ, գ. Լոռի Բերդ
հեռ. 0256-2-14-75
էլ. փոստ: loriberd.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 02 » դեկտեմբերի 2019թ. № 231-Ա

**ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԼԵՋԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 06-038-0011-0007 ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.113 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՏՆԱՄԵՐՁԻՆ ԵՎ 06-038-0011-0007-0001 ԾԱԿԱԳՐՈՎ 93.6 Ք/Մ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետի պահանջներով՝

**ո ր ո շ ու մ ե մ.**

1. Լոռի Բերդ համայնքի Լեջան բնակավայրի 06-038-0011-0007 ծածկագրով 0.113 հա մակերեսով տնամերձին և 06-038-0011-0007-0001 ծածկագրով 93.6 ք/մ մակերեսով բնակելի տանը տրամադրել ՝ գ. Լեջան, 8 – րդ փող., 1-ին նրբանցք տուն 1 փոստային հասցեն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է ընդունման օրվանից:

**ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝** **Ե.ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ**

Կ.Տ.

**2019թ. դեկտեմբերի 02**
**գ. Լոռի Բերդ**